

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 52/3

4 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Բարձրաշենի թոչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ 04.11.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 01.10.2015 թ-ի թիվ 159/05 որոշման դեմ:

«Բարձրաշենի թոչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության տետի ժ/պ-ի կողմից 01.10.2015 թվականին կայացվել է թիվ 159/05 որոշումը, որով որոշվել է «Բարձրաշենի թոչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ից (այսուհետ նաև ընկերություն) գանձել 775.581 դրամ: Նշված գումարն առաջացել է 16.05.2005 թվականի թիվ 1018089 ստուգման ակտից:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ պարագայում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի ուժով հարկային պարտավորություն չի կարող առաջանալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ընկերությունը խնդրում է վերադասության կարգով վերացնել 01.10.2015 թվականին կայացված թիվ 159/05 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ-ն, քննարկելով «Բարձրաշենի թոչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 01.10.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված պարտավորությունները սոցիալական ապահովության վճարի գծով կազմում են ընդամենը 775.581 դրամ: Նշված պարտավորությունն առաջադրվել է 16.05.2005 թ-ի թիվ 1018089 ստուգման ակտով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ կողմից 01.10.2015 թ-ին ընդունվել է թիվ 159/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Բարձրաշենի թոչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ-ից 775.581 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Գանգատում բերված պնդման վերաբերյալ, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի հիմքով պարտավորություններ չեն կարող առաջանալ, նշվեց հետևյալը.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն. «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո»:

Քննարկվող դեպքում Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները հայտնաբերվել են 2005 թ-ին իրականացված ստուգման ընթացքում (այլ ոչ թե Որոշումը կայացվելու), որոնք և արձանագրվել են 16.05.2005 թ-ին կազմված թիվ 1018089 ստուգման ակտով:

Մինևույն ժամանակ, ընկերության ներկայացուցիչը հայտարարեց, որ իրեն հայտնի չէ «Բարձրաշենի թոշնաբուժական ֆաբրիկա» ԲԲԸ-ում 2005 թ-ին ստուգում կատարված լինելու և դրա արդյունքում 16.05.2005 թ-ի թիվ 1018089 ստուգման ակտը կազմված լինելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 01.10.2015 թ-ի թիվ 159/05 որոշման կայացման պայմաններում, Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների առկայության, դրանց հիմնավոր լինելու ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Նիստի ընթացքում Հանձնաժողովը ցանկություն հայտնեց ծանոթանալ Որոշման կայացման հիմք հանդիսացած 16.05.2005 թ-ի թիվ 1018089 ստուգման ակտին: Սակայն, հարկային մարմնի ներկայացուցիչները հայտարարեցին, որ նշված ակտը առկա չէ:

Հանձնաժողովը գտնում է, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների հիմքի՝ 16.05.2005 թ-ի թիվ 1018089 ստուգման ակտի, բացակայության պայմաններում նշված ակտով առաջադրված պարտավորությունները չեն կարող հիմնավոր համարվել, հետևապես նաև՝ գանձման առաջադրվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 01.10.2015 թ-ի թիվ 159/05 որոշումը կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթների խախտմամբ, հետևապես ղեկավարվելով նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 01.10.2015 թ-ի թիվ 159/05 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ